



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
ՈՒ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 27 » 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000113

Ձեռնարկողը՝

«ԷՍ ԷՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ք. Երևան, Գարեգին Նժդեհի 48/2

Գործունեությունը՝ Առինջ համայնքի Պ.Սևակի 17 թաղամասի, 17-րդ փողոց, 17 հողամաս հասցեում նախագծվող բարձրահարկ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Կուրայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000113

<<27>> 11 2020թ.

Կոտայքի մարզի Առինջ համայնքի Պ. Սևակի 17 թաղամաս, 17 փողոց, 17 հողամաս հասցեում բարձրահարկ բազմաբնակարան բնակելի շենքի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ԷՄ ԷՍ գրուպ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Առինջ համայնք, Պ. Սևակի 17 թաղամաս, 17 փողոց, 17 հողամաս

«Բարձրահարկ բազմաբնակարան բնակելի շենքի» կառուցման աշխատանքները նախատեսվում են իրականացնել Կոտայքի մարզի Առինջ համայնքի Պ. Սևակի 17 թաղամաս, 17 փողոց, 17 հողամաս հասցեում, «ԷՄ ԷՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից:
Համաձայն սեփականաշնորհման վկայականի՝ հողամասի մակերեսը կազմում է 0.23722 հա, որտեղ բացակայում են շինությունները:

Գործունեության նպատակը քաղաքային զարգացման և առևտրա-հասարակական գործունեության խթանումն է:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ բնակելի կառուցապատման:

Նկարագրական մաս.

Համաձայն նախնական գնահատման հայտի բնութագրվող տարածքը ներկայացված է բուսահողի և խճաքարա-կավալազային ծածկույթով, ինչպես նաև հողամասում տեղ-տեղ առկա է կենցաղային աղբի մնացորդներ:

Ըստ ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության տվյալների, տարածքի ֆիզիկաերկրաբանական կառուցվածքի վերին շերտերին բնորոշ են Լոգբեր կազմված



Շին աշխատանքների ամբողջ ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 736.7մ³: Ջրցանի հաշվարկները կատարված են ըստ նորմերի և հաշվարկված ծավալները չեն ենթադրում հոսքաջրերի առաջացում:

Շին գործողությունների ընթացքում գնահատվում են կեղտաջրերի (բետոնաջուր՝ բետոնախառնիչների լվացումից) առաջացում, որոնց հեռացման համար հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման տարա ($\geq 10\text{մ}^3$), որտեղ կհեռացվեն կեղտաջրերը: Տարայում հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

Համաձայն նախնական գնահատման հայտի տարածքից մակերևութային ջրերի հեռացումն ըստ տեխնիկական պայմանի նախատեսվում է իրականացնել շենքի մոտ նախատեսվող առվակներով:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցվի բնակելի համալիրի հողամասով անցնող համայնքային ջրագծից, իսկ կոմունալ- կենցաղային կարիքների համար տեղադրվելու է ժամանակավոր զուգարան: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 1046.6մ³/շին.ժամ: Շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավվելու է 23 մարդ:

Բնակելի համալիրի հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2372.2մ²: Գործունեության ընթացքում նախատեսվում է 1132.410մ² կառուցապատման մակերեսով (վերգետնյա աշխատանքներ) բնակելի շենքի կառուցում, որոնք լինելու են 52.0 x 24.9մ առանցաքային չափերով: Կառույցն ունենալու է 17 հարկ՝ 62,0մ առավելագույն բարձրությամբ և 4 ստորգետնյա հարկեր՝ ավտոկայանատեղ:

Շենքի առաջինից երկրորդ վերգետնյա հարկերը նախատեսվում են օգտագործել առևտրահասարակական նպատակով, իսկ երրորդից տասնյոթերորդ հարկերը կլինեն բնակելի հարկեր: Յուրաքանչյուր բնակելի հարկում նախատեսվում է 10-12 բնակարան, որոնց ընդհանուր քանակը բնակելի շենքում կկազմի 150 բնակարան:

Նախատեսվում է 1547.3մ² կառուցապատման մակերեսով ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցման աշխատանքներ և ստեղծել 290.717մ² մակերեսով ասֆալտապատ գոտի:

Շահագործման փուլում բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ընկերության հետ նախօրոք կնքված պայմանագրի հիման վրա՝ ըստ տեխնիկական պայմանի: Բնակելի համալիրի գազամատակարարումը կիրականացվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է «ՀԷՑ»-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն:

Բնակելի համալիրի ջերմամատակարարումն իրականացվելու է անհատական ջեռուցման կաթսաներով:



- շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում մեքենաների վառելիքի լիցքավորումը ու քսայուղերի փոխարինումը,

- տեղամասից մերկացված բնահողի պահում՝ կանաչապատման ընթացքում օգտագործելու նպատակով,

- ԲԲԲԾ-ի համալիրում հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում:

ԲԲԲԾ-ի կառուցապատման գործունեության ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) հաշվարկվում է 1178.448 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին և չի խոչնդոտելու շրջակա բնակչության վիզուալ տեսադաշտը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն: Հայտը լրամշակվել է, հաշվի առնելով նաև ստացված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Առինջ համայնքի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:

3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերն ու կանոնները:

4. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

5. Աշխատողների խմելու-կենցաղային նպատակների համար ջուրը համայնքային ջրագծից վերցնելու համար անհրաժեշտ է ստանալ տեխնիկական պայման:



6. Գործունեությունը սկսել միայն ինսուլացիոն դրական եզրակացություն ստանալուց հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Կոտայքի մարզի Առինջ համայնքի Պ. Սևակի 17 թաղամաս, 17 փողոց, 17 հողամաս հասցեում բարձրահարկ բազմաբնակարան բնակելի շենքի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Գլխավոր մասնագետ՝



Գ. Գևորգյան

Վ. Ռախսյան